ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ԵՊՀ պրոռեկտոր
Ռ. Բարխուդարյան
30.06.2026

ԿԱՐԾԻՔ

Երևանի պետական համալսարանի թյուրքագիտության ամբիոնի
2026 թ.-ի հունիսի 26-ին կայացած նիստի

Նիստին ներկա էին ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկան, պ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Մելքոնյանը, թյուրքագիտության ամբիոնի վարիչ, պ.գ.թ., պրոֆ. Ա. Սաֆարյանը, պ.գ.թ., դոցենտ Ա. Սողոմոնյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Սահակյանը, պ.գ.թ., դոցենտ Վ. Գեղամյանը, բ.գ.թ., դոցենտ Ն. Պողոսյանը, բ.գ.թ., դոցենտ Ս. Գալշոյանը, պ.գ.թ., դոցենտ Մ. Աբրահամյանը, բ.գ.թ., դոցենտ Լ Սաֆրաստյանը, պ.գ.թ. Գ. Հովհաննիսյանը, բ.գ.թ. Մ. Մելքոնյանը:

Լսեցին ասպիրանտ Սեդա Տիգրանի Տիգրանյանի «Իսլամական պետության եվ հասարակության զարգացման տեսլականը 13-14-րդ դարերի աշխարհաքաղաքական կերպափոխումների համատեքստում (Իբն Թայմիայի տեսանկյունից)» ատենախոսության Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության քննարկումը:

Արտահայտվեցին արևելագիտության ֆակուլտետի դեկան, պ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Մելքոնյանը, թյուրքագիտության ամբիոնի վարիչ, պ.գ.թ., պրոֆ. Ա. Սաֆարյանը, պ.գ.թ., դոցենտ Ա. Սողոմոնյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Սահակյանը:

Ատենախոսությանը ծանոթանալուց հետո իրենց կարծիքը հայտնեցին պ.գ.թ., պրոֆեսոր Ալ. Սաֆարյանը և բ.գ.թ., դոցենտ Լ. Սահակյանը, որոնք, մասնավորապես, նշեցին հետևյալը.

Ատենախոսությունը վերաբերում է 13-14-րդ դարերի պատմական իրադարձությունների խորապատկերում Աբբասյան խալիֆայության կործանման և իսլամական համայնքի՝ ումմայի թուլանալու պատճառների վերաբերյալ հանբալիական մազհաբի ականավոր ներկայացուցիչ Իբն Թայմիայի մոտեցումների, ստեղծված ճգնաժամից դուրս գալու ուղիների և հասարակության սոցիալ-քաղաքական կազմակերպման տեսլականի ուսումնասիրությանը: Սույն

ատենախոսության շրջանակում առաջին անգամ փորձ է արվում գլխավորապես արաբերեն սկզբաղբյուրների, ինչպես նաև օտարալեզու, հայալեզու այլ աղբյուրների և գիտական գրականության հենքով համակողմանիորեն հետազոտելու և վերլուծելու 13-14-րդ դարերի պատմական շրջադարձային իրադարձությունների լույսի ներքո Իբն Թայմիայի գաղափարները, պատմաքաղաքական իրողություններից ելնելով՝ իրավիճակային լուծումներ գտնելու մեխանիզմները՝ պարզաբանելով և հստակեցնելով տարակարծությունների առարկա դարձած դրույթները: Ատենախոսությունը պարունակում նոր շեշտադրումներ, և, հետևաբար, ուսումնասիրության նոր դիտանկյուն է՝ լույս է սփռելով ուսումնասիրվող ժամանակահատվածում պատմական, քաղաքական իրողությունների վրա: Ատենախոսության հիմնադրույթները կարող են օգտակար լինել ուսումնասիրվող ժամանակաշրջանին և տարածաշրջանին առնչվող պատմական հետազոտություններ կատարելիս, քանի որ իրապես հնարավորություն են ընձեռում խորքայնորեն հասկանալու պատմաքաղաքական, սոցիալ-մշակութային կերպափոխումները:

Թեման առավել քան արդիական է: Ինչպես հեղինակն իրավացիորեն նշում է, Իբն Թայմիայի գաղափարները զգալի ազդեցություն են ունեցել մուսուլմանական աշխարհում կրոնաքաղաքական մտքի զարգացման վրա. տարբեր նպատակներ և գործելաոճ ունեցող չափավոր և ծայրահեղական բազմաթիվ խմբավորումներ իրենց գործողությունների տեսական հիմք են դիտել և դիտում այդ հեղինակավոր գործչի գաղափարները՝ հաճախ իմաստափոխելով և աղավաղելով դրանք:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, համապատասխան ենթագլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 178 էջ:

Ատենախոսության առաջին գլուխը վերնագրված է «ԻԲՆ ԹԱՅՄԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 13-14-ՐԴ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ» և բաղկացած է երեք ենթագլխից: Գլխում սպառիչ կերպով ներկայացվում են իսլամական աշխարհում տեղի ունեցող պատմական փոփոխությունները, մասնավորապես՝ 1258 թ. Բաղդադի անկումը, Աբբասյան խալիֆայության հինգհարյուրամյա պատմության ավարտը, Մամլուքյան սուլթանության ու Իրանի մոնղոլական Իլխանության հակամարտությունը, ներկայացվում է Իբն Թայմիայի գործունեությունը, մասնակցությունը մոնղոլական արշավանքներին դիմագրավելուն, վերլուծվում են ժամանակի պատմական և քաղաքական իրադրության խորապատկերում իսլամի դիտանկյունից մոնղոլների դեմ ռազմական պայքարի անհրաժեշտությունը հիմնավորելու ուղիները:

Ատենախոսության երկրորդ՝ «ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՈՒՄՄԱՅԻ ՊԱՌԱԿՏՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐ» խորագրով և հինգ ենթագլխից բաղկացած գլխում ներկայացվում և վերլուծվում են այն բոլոր գործոնները, նորարարությունները, որոնք,

ըստ Իբն Թայմիայի, հանգեցրել են ումմայի պառակտմանը և իսլամական աշխարհում տիրող ճգնաժամին: Ըստ անհրաժեշտության անդրադարձ է կատարվում իսլամի ճյուղերի շրջանակում տարբեր դրույթների ձևավորման պատմական համատեքստին: Այս գլխի հիմնադրույթները հատկապես արժեքավոր են միջնադարյան իսլամական հասարակության կրոնական աշխարհընկալման ուսումնասիրության տեսանկյունից, որը թույլ է տալիս առավել խորքայնորեն հասկանալու ուսումնասիրվող ժամանակաշրջանի պատմական իրողությունները պայմանավորող ներքին մեխանիզմները և գաղափարական շերտը:

Ատենախոսության երրորդ «ՈՒՄՄԱՅԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ և ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ» գլխում ներկայացվում և համապարփակ կերպով վերլուծվում են Աբբասյան խալիֆայության փլուզումից հետո ումման քայքայված վիճակից հանելու, հասարակությունը քաղաքականապես կազմակերպելու սկզբունքները: Ատենախոսը, օգտագործելով աղբյուրագիտական լայն հենք, հետազոտում և ամբողջական կերպով ներկայացնում է տարակարծությունների առարկա դարձած մի շարք կարևոր դրույթներ, որոնք անկյունաքարային նշանակություն ունեն միջնադարյան ժամանակաշրջանների և իսլամական հասարակության զարգացման հետագա ընթացքին առնչվող իրողությունները ճշգրիտ պատկերացնելու տեսանկյունից:

Գնահատելով ներկայացված մոտեցումներն ու եզրակացությունները, այդուհանդերձ, պետք է նշենք, որ, ինչպես ցանկացած աշխատանք, ատենախոսությունը զերծ չէ որոշ թերություններից:

1. Ատենախոսության երկրորդ գլխում մանրամասն վերլուծվում և ներկայացվում են ումմայի պառակտմանը նպաստող և միասնականությունը վերականգնելուն խոչընդոտող նորարարությունները, ինչպես նաև դրանց առաջացումը պայմանավորող պատմական հանգամանքները: Աշխատանքի այսպիսի բաղադրիչը, իհարկե, բխում է խնդրո առարկա թեմայի բովանդակությունից և խիստ անհրաժեշտ է ուսումնասիրվող ժամանակաշրջանի և տարածաշրջանի իրողությունները պայմանավորող ներքին գործոնները լիարժեք լուսաբանելու տեսանկյունից: Այդուհանդերձ, ցանկալի կլիներ որոշ երկրորդական նշանակություն ունեցող դրույթներ վերլուծելիս տեքստում սահմանափակվել մեկ տիպական օրինակով՝ խուսափելով սույն աշխատանքի տեսանկյունից ոչ այնքան կարևոր մանրամասնություններից:

<u>Որոշեցին</u> նկատի առնելով ընդդիմախոսների եզրակացությունները, երաշխավորել Սեդա Տիգրանի Տիգրանյանի՝ «Իսլամական պետության եվ հասարակության զարգացման տեսլականը 13-14-րդ դարերի աշխարհաքաղաքական կերպափոխումների համատեքստում (Իբն Թայմիայի տեսանկյունից)» ատենախոսությունը հրապակային պաշտպանության, քանի որ բավարարում է ՀՀ

ԿԳՄՍ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի՝ թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջները, իսկ նրա հեղինակն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Երևանի պետական համալսարանի
թյուրքագիտության ամբիոնի վարիչ՝ Ալ. Սաֆարյան

Նիստի քարտուղար՝ Մ. Մամյան

26, հունիսի 2026 թ.

Ալ. Սաֆարյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտքարտուղար՝ Մ. Հովհաննիսյան